

ԱԶՏԱԿ

ՕՐԱԹԵՐԹ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE **آزتاک** جريدة يومية سياسية وأدبية - المبرة المؤولة، إيشادرووشيان

1500 L.Ռ. 76Գ-ՏԱՐԻ, ԹԻԻ 203 (21545) ՀԻՆԳՇԱՐԹԻ, 6 ՆՈՅԵՄԲԵՐ 2003 10 ԷՁ

ՀԱՅԱՍՏԱՆ

ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻՆ

Հայաստանի վարչապետ Անդրանիկ Մարգարեանի որոշումով, Հայաստանի քաղաքաշինության նախարարի տեղակալ նշանակում է Կարլեն Գեորգեան, իսկ ուժանիթի նախարարի տեղակալ նշանակում է Արտակ Դարբեան: Կառավարական պաշտոններում այս նշանակումները կրկնապարարին Հայաստանի համաձայնական կառավարության կուսակցություններուն միջև համաձայնարար: Կարլեն Գեորգեան ծնած է 1957ին, Կիրովական: Աւարտած է ճարտարագիտական համալսարանը: Մինչև նշանակումը կր վարէր «Նիկոլ Դուման» արտադրական համագործակցականին նախագահի եւ տնօրէնի պաշտօնը: Հ. Յ. Դ. անդամ է: Արտակ Դարբեան Քաջարանէն է: Ան «Հայկական Երկաթուղի» ընկերության տնօրէնի տեղակալ էր: «Օրինաց Երկիր» կուսակցության անդամ է:

ՆԱԽԱԳԱՅ ԼԱՅՈՒՏԵՆ ԿՈՉ Ե. ՄԻՈՒԹԵԱՆ ԵՒ ՄԱԿԻ

Նախագահ Կոր. Էմիլ Լախուտ երէկ Պապայտայի մէջ ընդունեց Եւրոպական Միութեան նախագահի յատուկ պատուիրակ՝ Իտալիոյ արտաքին գործոց փոխ նախարար Ալֆրեդո Մանթիքան, ներկայութեամբ Լիբանանի մէջ Իտալիոյ դեսպան Տրանքո Միսթրէթթայի, Մանթիքայի ընկերակցող պատուիրակութեան եւ նախագահ Լախուտի արտաքին քաղաքականութեան խորհրդական Ժորժ Տիպի:

Նախագահ Լախուտ կոչ ուղղեց Եւրոպական Միութեան եւ միջազգային ընտանիքին՝ յանձնելու ճնշում բանեցնել Իսրայէլի վրայ, որպէսզի արգելք հանդիսանան անոր՝ Միջին Արեւելքի մէջ կացութիւնը պայթուցիկ դարձնել: Նախագահ Լախուտ յայտնեց, որ Լիբանանն ու Սուրիան երկու պետութիւններ են, որոնք կը հաւատան արդար եւ ամբողջական խաղաղութեան եւ ամէն ջանք ի գործ կը դնեն գործադրելու համար միջազգային որոշումները: Ան աւելցուց, որ հակառակ Սուրիոյ եւ Լիբանանի կողմէ ՄԱԿի Ապահովութեան խորհուրդի բանաձեւերուն նկատմամբ ցուցաբերուած կառչածութեան, Իսրայէլ կը դիմէ պանոսք թիրախ դարձնելու արարքներու, ինչ որ ուղղակիօրէն պատճառ կ'ըլլայ շրջանի անկայունութեան:

Նախագահ Լախուտ շեշտեց, որ այնքան ատեն որ Իսրայէլ կը վայելէ Ուաշինկթընի պահանջները, իր պինտորական ուժը գործածելով պիտի շարունակէ ձախողեցնել միջազգային որեւէ նախաձեռնութիւն, որ կը միտի Միջին Արեւելքի մէջ խաղաղութիւն հաստատել:

Անդրադառնալով Իրաքի տագնապին, նախագահ Լախուտ յոյս յայտնեց, որ ՄԱԿ ամբողջովին կը ստանանէ Իրաքի թղթածրարը եւ առիթ կ'ընծայէ իրաքցի ժողովուրդին ղեկավարելու ինքիս թանց օտար միջամտութեանց:

Նախագահ Լախուտ ընդգծեց, որ Լիբանանն ղէմ է ահաբեկչութեան շեշտելով, որ ան յստակօրէն կը պանապանէ ահաբեկչութեան եւ բռնազարուած հողերը պատասխանելու համար մղուած արդար պայքարին միջեւ: Ան նաեւ ըսաւ, որ Լիբանան կը պօրակցի պաղեստինցի ժողովուրդին, անոր անկախութեան եւ հողերու ապստաղումին, ինչպէս նաեւ պաղեստինցի բոլոր գաղթականներու տունդարձին: Ան վերահաստատեց, որ Լիբանան կը մերժէ պաղեստինցի գաղթականներու բնակեցումը, պահպանելով իր երկրին մէջ տիրող ազգային միասնականութիւնը:

Նախագահ Լախուտ նշեց, որ Լիբանան հեպտաաօրէն կը գործակցի Ե. Միութեան հետ, շեշտելով, որ Լիբանան կ'ուզէ Ե. Միութեան հետ գործակցութեան համաձայնագրի գործադրութիւնը ամրապնդել:

Իր կարգին, Մանթիքա դրուատեց լիբանանեւ-իտալական երկկողմանի յարաբերութիւնները եւ աւելցուց, որ այցելութեան նպատակն է Միջին Արեւելքի մէջ կայունութիւն հաստատել:

Նախագահ Լախուտ ընդունեց նաեւ խորհրդարանի նախագահ Նեայիի Պրըրիին, որուն հետ քննարկեց երկրին ընդհանուր կացութիւնը, ինչպէս նաեւ շրջանային իրադարձութիւնները: Հանդիպումէն ետք Պրըրի ըսաւ, որ նախագահ Լախուտի փոխանցած է Դամասկոսի մէջ անցեալ շաբաթավերջին գումարուած Արաբ խորհրդարանականներու Համադաշնակցութեան արդիւնքներուն մասին:

Նախագահական պալատի հիւրերը եղան նաեւ նախկին երեսփոխան Թամմամ Մալամ, ընդհանուր դատախազ Ատնան Ատտոււմ եւ պետական անվտանգութեան ընդհանուր տնօրէն Կոր. Էտուար Մանուր:

ՎՐԱՍՏԱՆԻ ՅՈՅՅԵՐՈՒՆ ԵՒ ԲՈՂՈՔԻ ՀԱՒԱՔՆԵՐՈՒՆ ԵՏԻՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԸ ՏԵՍՆԵՆ «ՈՎԿԻԱՆՈՍԵՆ ԱՆԴԻՆ ԳՏՆՈՒՈՂ ՈՒԺԵՐ»...



Վրաստանի մէջ ընդդիմադիր ուժերը երէկ հանրահաւաք մը կազմակերպեցին, բողոքելու համար Նոյեմբեր 2ին կայացած խորհրդարանական ընտրութիւններու խախտումներուն դէմ: Թիֆլիսի մէջ կայացած հաւաքին մասնակցեցան շուրջ 5000 վրացիներ, ներառեալ՝ ընդդիմադիր տարբեր ուժերու ղեկավարները: Նախանցեալ օր եւս ընդդիմադիրները հանրահաւաք կազմակերպած էին, որուն ընթացքին ընդդիմադիր ղեկավարներ՝ Պուրճանաձէ, Սահակաշվիլի եւ Պատիւղվիլի վերջնագիրներ կայացուցած էին նախագահին՝ ընդունելու իր պաշտպանած դաշինքին պարտութիւնը:

Մինչ այդ, Վրաստանի նախագահի նստավայրը կը մնայ շրջափակուած Շար.ը՝ էջ 9

ՆԱԽԱԳԱՅ ՔՈՉԱՐԵԱՆ ԵՒ ՌՈՒՇԱՅԼՈ ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԱՐԲԵՐ ՀԱՐՅԵՐ



Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեան երէկ ընդունեց Ռուսիոյ Անվտանգութեան խորհուրդի քարտուղար Վլատիմիր Ռուշայլոն: Անոնք քննարկեցին տնտեսական համագործակցութեան վարձագման կարելիութիւնները: Երկուստեք գոհունակութիւն արտայայտուեցաւ հայ-ռուսական միջկառավարական տնտեսական յանձնաժողովի աշխատանքներուն առնչութեամբ. յատկապէս կարեւոր նկատուեցաւ ուժանիթի բնագաւառէն ներս գործակցութեան աշխուժացումը: Նախագահ Քոչարեան եւ Ռուշայլո անդրադարձան նաեւ շրջանային անվտանգութեան խնդիրներուն եւ Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման գործընթացի ներկայ հանգրուանին:

Ռուշայլո երէկ տեսակցեցաւ նաեւ Հայաստանի ոստիկանութեան պետ Կոր. Հայկ Յարու- Շար.ը՝ էջ 3

Ե. ՄԻՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆԸ ԿԸ ՅԱՅՏԱՐԱՐԵ

Ե. ՄԻՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒ ԹՈՒՐՔԻՈՅ ՅՈՅՍԵՐԸ ՊԻՏԻ ՆՍԵՄԱՆԱՆ ԵԹԷ ԿԻՊՐՈՍԻ ՀԱՐՅԸ ՄԵԱՅ ԱՆԼՈՅԾ

Եւրոպական Յանձնաժողովը երէկ ողջունած է Թուրքիոյ «վճռականութիւնը»՝ Ե. Միութեան անդամակցութեան համար անհրաժեշտ բարեկարգումները յառաջ մղելու, սակայն անկախ լուսարձակի տակ առած է գետնի վրայ շարք մը հարցեր, ինչպէս նաեւ Կիպրոսի տագնապը:

Թուրքիա, Պուլկա-իսին Արեւելեան Եւրոպայէն եւ Միջերկրականէն շրջանէն յաւել- Շար.ը՝ էջ 9

ԸՍՏ ԴԵՍՊԱՆ ՉԵՒԻՔՈՅ

Ե. ՄԻՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՊԱՅՄԱՆ ՉԷ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԱԾ ԹՈՒՐՔԻՈՅ

Ազրպէյճանի մէջ Թուրքիոյ ղեկավար Ունալ Չեւիթքոյ յայտարարած է, թէ Եւրոպական Միութիւնը Հայաստանի հետ յարաբերութիւններու վերահաստատման պայման չէ ներկայացուցած Թուրքիոյ: Ազրպէյճանական «Օյալար» լրատու գործակալութեան տրուած հարցազրոյցի մը ընթացքին, Թուրք ղեկավարը նշած է. «Այդպիսի պայման չի կրնար ըլլալ: Թուրքիա ինք կ'որոշէ, թէ ինչպէս կը կառուցէ զբացիներու հետ իր յարաբերութիւնները»:

Անդրադառնալով Թուրքիոյ վարչապետ Ռեճէփ Թաիփի էրտողանի Ազրպէյճան կատարելիք այցելութեան մասին շրջան ընդ լուրերուն, Չեւիթքոյ յայտնած է, թէ այցելութեան թուական չէ հշոյն: «Իրրեւ վարչապետ Իլհամ Ալիեւի Թուրքիա կատարած այցելութեան ընթացքին էրտողան պարզապէս ցանկութիւն յայտնած էր այցելել Ազրպէյճան», զիտել տուած է Ազրպէյճանի մէջ Թուրքիոյ ղեկավարը:

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՆԱԽԱՐԱՐԻՏԻԻ



Հ. Յ. Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէն ներկայացնող պատուիրակութիւն մը երէկ առաւօտ այցելեց մշակութի նախարար Ղապի Արիտիի:

Տեսակցութեան ընթացքին արծարծուեցան նախարարութեան գործունէութեան վերաբերող ընդհանուր հարցեր: Նախարար Հարիրի դրուատիքով անդրադարձաւ լիբանանահայ գաղութի մշակութային աշխուժ գործունէութեան: Հանդիպումը առիթ ծառայեց նաեւ խորհրդակցելու շրջանային եւ տեղական քաղաքական վերջին իրադարձութիւններուն մասին:

ՏԻԳՐԱՆ ՆԱԴԴԱԼԵԱՆԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԹԵՒԱԿՈՒԵՑ ԴԱՏԱԿԱՆ ՎԻՃԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՓՈՒԼ

Հայաստանի Պատկերասփիռի եւ Չայնասփիռի Ընկերութեան խորհուրդի նախագահ Տիգրան Նաղդալեանի սպանութեան յանցագործներու դատավարութիւնը երէկ թեւակոխեց դատական վիճաբանութիւններու փուլ: Մեղադրող կողմը՝ դատախազները ներկայացուցին իրենց մեղադրական ձևերը, ապացուցուած նկատելով մեղադրուող ամբաստանաւորներուն նախաքննական մարմինի ներկայացուցած մեղադրանքները: Այսպէս, դատախազները հաստատուած նկատեցին, որ Տիգրան Նաղդալեանի սպանութիւնը պատուիրած է Արմէն Սարգսեան, իսկ սպանութիւնը կատարուած է ձոն Յարութիւնեանի ձեռամբ: Անոնց միջեւ կապող օղակ հանդիսացած են Յովհաննէս Յարութիւնեան եւ Գեղամ Շահպապեան: Մեղադրող կողմը, հիմնուելով Հայաստանի քրէական նոր


Շար.ը՝ էջ 10

Back to Cavallino
Open Antipasta buffet:
• Choice of pasta
• Choice of grilled meat, fish or chicken
• Choice of dessert
Enjoy the Quattros live music band
Every Friday & Saturday
15\$ per person, tax included
Promenade Hotel, Zalka, tel: 01-874774

Հ. Յ. Դ. ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅ ԴԱՏԻ ՄԱՐՄԻՆ ԶԱՒԱՆՔ
ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱԿԱՆ ՅՈՒՑԱՀԱՆԿԵՍ
Այսօր՝ Հինգշաբթի, 6 Նոյեմբեր 2003, երեկոյեան ժամը 7:00ին, «Ազատամարտ» ակումբի սրահին մէջ, Էշրեֆիէ:
• Զեկոյց՝ Զաւախքի այսօրուան իրավիճակին մասին, ժամը 8:00ին:
Զեկուցաբեր՝ ԸՆԿ. ՀԱՅԿԱԶՈՒՆ ԱԼՎՐՅԵԱՆ


ՋԱԻԱԽՔԻ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԱՃԱԿԵՐՏԱԿԱՆ ԸՆԴԱՔ

Ջալախքի հրատապ հարցին լիբանանահայությունը իրապես դարձնելու նպատակով, 3-9 Նոյեմբեր երկարող ձեռնարկներում թե՛ հալածվածները ծիրաններն էլ, թե՛ հայ Դատի Մարմինը կազմակերպած էր նաև աշակերտական հալածումը: Երէկ, առաւօտեան ժամը 11:30ին, «Յակոբ Տէր Մելքոնեան» թատերասրահին մէջ տեղի ունեցած այս հալածումը ներկայ էին լիբանանահայ երկրորդական վարժարաններու աշակերտներ:



Ashnag

Յետ լիբանանի եւ Հայաստանի քայլերգներուն ունկնդրութեան, Հ. Յ. Լիբանանի Հայ Դատի Մարմինի անունով բացման խօսքով հանդէս եկաւ Հրայր Վարժապետեան, որ նշելէ ետք Ջալախքի հարցին մասին տեղեկանալու անհրաժեշտութիւնը, շեշտեց. «Ջալախքը հայկական պատմական հող է եւ վերջի վերջոյ մաս պիտի կազմէ ամբողջական Հայաստանին»:



Ashnag

Այս աշակերտներուն ներկայացուցաւ լուսանկարիչ Հրայր Բապտի Ջալախքի նուիրած լուսանկարներուն տեսարկով:

Ջալախքի շարժումն առիթով Հայաստանէն Լիբանան հրաւիրուած Ջալախքի Օժանդակութեան Ֆոնտի ներկայացուցիչ Հայկապոն Ալվրցեան

հաստատելով: Աշակերտներուն ներկայացնելէ ետք հայրենի Ջալախքին մշակութային եւ պատմական-քաղաքական առանձնայատկութիւնները, Հայկապոն Ալվրցեան նշեց շրջանին դիմագրւած

ԸՆԿ. Հայկապոն Ալվրցեան

հայ ժողովուրդը, ըստ բանախօսք, նշելով որ Ջալախքի ներքին կրթական հող է: «Մենք շատ հողեր կորսնցուցած ենք եւ չենք կրնար թող տալ, որ ներկայ պայմաններուն մէջ յաւելեալ հոնդի կորուստ ունենանք»: Ջալախքը կառուցելու համար Ջալախքի ներկայացուցած կարեւոր

թափման պատճառով նախկին հայաբնակ վայրերը կը բնակեցուին թուրքերով: Ասիկա վտանգ մըն է Հայաստանի հիւսիսային սահմանին համար», բացատրեց բանախօսը:

եան առաջին հերթին ծանօթացուց Ջալախքի աշխարհագրական տուեալները: Ան կարեւորութեամբ շեշտեց, որ ի տարբերութիւն պատմական Հայաստանի մեծ մասամբ բռնագրաւուած տարածքներուն, Ջալախքը այն սակաւաթիւ շրջաններէն մէկն է, որ բնակուած է հայութեամբ եւ բնականաբար անհրաժեշտ է անոր հետ սերտ կապ

դժուարութիւնները, ինչպէս՝ քաղաքական ճնշումները, մշակութային եւ տնտեսական ծանր վիճակը, որ պատճառ կը դառնայ երիտասարդներու արտագաղթին եւ շրջանին հայաթափման: «Այս դժուարութիւններուն մէջ ջարտախնդիրներուն յաւելեալ ուժ կը ներշնչէ այն, որ հայրենի այս հողին մէջ անոնք առանձին չեն, այլ իրենց հետ է ամբողջ

ընդհանուրը, Հայկապոն Ալվրցեան շեշտեց, որ Ջալախքը նախ հայկական հող է: «Մենք շատ հողեր կորսնցուցած ենք եւ չենք կրնար թող տալ, որ ներկայ պայմաններուն մէջ յաւելեալ հոնդի կորուստ ունենանք»: Ջալախքը կառուցելու համար Ջալախքի ներկայացուցած կարեւոր

իր խօսքի աւարտին, Հայկապոն Ալվրցեան քաջալերեց լիբանանահայ աշակերտները, որ շարունակեն կապ հաստատել Ջալախքի իրենց տարեկիցներուն հետ: Ան յոյս յայտնեց, որ ներկաները յառաջիկային առիթը կ'ունենան աւելի սերտօրէն ծանչնալու Ջալախքի պատմական-քաղաքական արժէքը եւ մշակութային հարստութիւնները:

ՋԱԻԱԽՔԻ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՉԵՌՆԱՐԿ ՆԱԵՒ ԱՅՆՃԱՐԻ ՄԷՁ



ԸՆԿ. Հայկապոն Ալվրցեան

Հ. Յ. Լիբանանի Հայ Դատի Մարմինի կազմակերպութեամբ «Ջալախքի օրեր» ձեռնարկներու շարքին ծիրաններն էլ, թե՛ հայ Դատի Մարմինը եւս ապրեցաւ Ջալախքի հետաքրքրութեան պահեր:

Նախ լուսանկարներու «շրջուն» ցուցահանդէսը՝ Հրայր Բապտի, «Գ. Կիւպէնկեան» սրահին մէջ, ապա ժողովրդային հաւաքը իրենց շուրջ համախմբեցին մեծաթիւ հայորդիներ, որոնք փութացած էին իմանալու Ջալախքահայութեան մասին «թարմ» տեղեկութիւններ, գործադրանքներն ալ զօնով յատկապէս Լիբանան հրաւիրուած Հայկապոն Ալվրցեան:

Ձեռնարկը սկսաւ Լիբանանի եւ Հայաստանի



Զրիստ Լիպարեան

քայլերգներու ունկնդրութեամբ, ապա Հայ Դատի Մարմինի անունով Զրիստ Լիպարեան կատարեց բացման խօսքը, վեր առնելով Ջալախքի յատկապէս ռազմավարական կարեւորութիւնը Հայաստանի համար, իսկ Ջալախքի հարցին նշանակութիւնը՝ համազգային մեր իտէալներուն համար:

Յուզարդուեցաւ Ջալախքի նուիրուած յատուկ տեսարկով մը, որմէ ետք ընկ. Հայկապոն Ալվրցեան համապարփակ ձեռով ներկայացուց իր նիւթը՝ պատմական, քաղաքական, տնտեսական եւ ընկերային երեսներով, յատկապէս կեդրոնանալով այժմեական հարցերու վրայ եւ պարզելով Ջալախքի ու Ջալախքահայութեան ներկայ իրավիճակը, որ խորապէս մտահոգիչ է եւ կ'ենթադրէ համահայկական աշակերտութիւն:

Ձեռնարկի աւարտին, երգիչ Էլի Պերպրեան մեկնաբանեց ազգային երգեր:

Arabic calligraphy and logos at the top of the right column.

Իրաքի մէջ ամերիկեան զինուորներուն դէմ ծայր առած յարձակումներն ու անոնց պատճառով Միացեալ Նահանգներու եւ ընդհանրապէս աշխարհի մէջ որդեգրուող կեցածքները, պաղեստինեան կառավարութեան կազմութեան ընթացքը եւ հոն տիրող տարակարծութիւնները, Սուրիան դատելու որոշումին առնչութեամբ արտա-յայտութիւնները կը հանդիսանան 5 Նոյեմբերի լիբանանեան օրաթերթերուն զխաւոր լուրերը:

«Նահար» դիտել տուած է, թէ Պուշխուտագաւ ձերբակալելի Սատտարը, իսկ ընդհանրութիւնը երկրորդ օրն ըլլալով յարձակումներու ձեռնարկեց ղեկավարութեան գտնուած վայրերուն վրայ:

«Հայաթ»-ի համաձայն, յարձակումներուն ալիքը կը սաստկանայ հարաւէն հիւսիս, իսկ Նաժաֆի մէջ բաց գործադուլ կը յայտարարուի:

Մուսաբապալ» գրած է, թէ Ռաւթիի թերթին հետ ունեցած վրայի ընթացքին շեշտած է, որ կառչած է քաղաքայիններուն վնաս չհասցնելու որոշումին:

ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ

ՄԻՋԱՉԳԱՅԻՆ ԵՒ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

«Տիար» նշած է, թէ Իսրայէլ կը ծրագրէ ձերբակալուածները Այրտորդանանէն Կապա փոխադրել, իսկ Արաֆատ պաղեստինեան կառավարութեան մէջ եղած տագնապը կ'երկարաձգէ մէկ շաբաթ եւս:

«Անուար»-ի համաձայն, ներքին գործոց նախարարութեան նշանակման առնչութեամբ եղած տարակարծութիւնները կը խանգարեն կառավարութեան կազմութիւնը:

«Սաֆիր» գրած է, թէ Սուրիոյ մէջ նշանակուած ամերիկացի դեսպանը յայտնեց, որ պատճէյու օրէնքը վարքագիծի չափանիշներ կը ձգէ:

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿԵԱՆՔ

«Անուար» հարց տուած է, թէ մինչեւ ե՞րբ պիտի շարունակուի տարակարծութիւններ յարուցող թղթածրարներու արժարձումը նախարարաց խորհուրդէն ներս:

Ըստ թերթին, կառավարութեան մէջ մերժումի ալիք մը բարձրացած է պետական պիտոմէնթի դէմ:

«Սաֆիր» գրած է, թէ Սուրիոյ մէջ նշանակուած ամերիկացի դեսպանը յայտնեց, որ պատճէյու օրէնքը վարքագիծի չափանիշներ կը ձգէ:

«Տիար» գրած է, թէ Սֆէյր յայտարարած է, որ երկրին մէջ տիրող կացութիւնը չ'արտօներ կարգ մը անձերու վերադարձը:

«Սաֆիր» գրած է, թէ Սուրիոյ մէջ նշանակուած ամերիկացի դեսպանը յայտնեց, որ պատճէյու օրէնքը վարքագիծի չափանիշներ կը ձգէ:

«Սաֆիր» գրած է, թէ Սուրիոյ մէջ նշանակուած ամերիկացի դեսպանը յայտնեց, որ պատճէյու օրէնքը վարքագիծի չափանիշներ կը ձգէ:

ՆԱԽԱԳԱՀ ՔՈՉԱՐԵԱՆ ...

Շարունակուած Ա. Էջէն

Իրենեանի հետ: Քննարկուեցան յանցագործութեան դէմ պայքարի, յատկապէս՝ միջազգային ահաբեկչութեան, ապօրինի գաղթի, թմրեցուցիչի մաքսանենցութեան առնչուող խնդիրներ եւ երկուստեք հետաքրքրութիւն ներկայացնող այլ հարցեր:

● ՌՈՒՄԻՆԻՅԱ յաշտպանութեան նախարարութիւնը երէկ յայտարարած է, թէ Ռուսիոյ պաշտպանութեան նախարար Սերգէյ Իվանով Հայաստան պիտի այցելէ Նոյեմբեր 10էն 12: Ծրագրուած են հանդիպումներ Հայաստանի նախագահ Ռոպէրթ Բէշարեանի եւ քաղաքատիճան այլ պաշտօնատարներուն հետ: Պիտի կատարուին բանակցութիւններ եւ պիտի ստորագրուին շարք մը համաձայնագիրներ:

ԵՐԳԻՉ ՍԱՊԵՐ ՌՈՒՊԱԿԻ

«ՎԱՆԱՅ ՉԱՅՆ» ԷՆ

Թունուցող հանրածանօթ երգիչ ՍԱՊԵՐ ՌՈՒՊԱԿԻ այսօր՝ Հինգշաբթի, 6 Նոյեմբեր 2003, կէսօրէ ետք ժամը 3:00ին պիտի պատասխանէ ԸԱԼԱ ԸԱՍՏՍՏԻ հարցումներուն:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հովանաւորութեամբ

ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՍ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆԻ

(Առաջնորդ Լիբանանի Հայոց Թեմի)

ՀՈԳԵՒՈՐ

ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Ուրբաթ, 7 Նոյեմբեր 2003, երեկոյեան ժամը 6:00ին. Ս. Նշան Մայր եկեղեցւոյ մէջ:

Դասախօս՝

ՇՈԳԸ. Տ. ՍԱՇՏՈՅ ՎՐԴ. ՉՊՊԱՆԵԱՆ

ՆԻՍԻՆ

«ԻՆՉՊԵՍ ԿԱՐԴԱԼ ԵՒ ՀԱՍԿՆԱԼ ԱՍՏՈՒԱԾ ԱՇՈՒՆՉԸ»

Սիրով կը հրաւիրենք մեր հաւատացեալները:

ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ս. ՆՃԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՅ

ՆԱԲԱԳՐԱԿԱՆ

ԱՐԴԱՐ ԵՒ ՆԱԲԱՍԱՐԱԿՇՈՒՌԱԾ ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳԻ ՄԸ ՆԱՄԱՐ

Գաղափարական եւ ռազմավարական առումներով ուշագրաւ պահու մը գուգադիպեցաւ Ընկերվար Միջազգայնականի 22րդ Վեհաժողովին կողմէ Դաշնակցութեան լիիրաւ անդամի կարգաւիճակին պաշտօնական հաստատագրումը: Հոկտեմբերի վերջին օրերուն Սան Փաուլոյի մէջ գումարուած Ընկերվար Միջազգայնականի բարձրագոյն ժողովը, որ երեք տարին անգամ մը տեղի կ'ունենայ եւ պայմանագրուած բերմամբ այս անգամ տարիով մը յետաձգուած էր, իր քաղաքական հիմնական օրակարգին վրայ ունէր ուրոյն՝ այլընտրանքային աշխարհակարգի մը պատկերացումը յստակացնելու եւ համապատասխան ուղեգիծ որդեգրելու կարեւորագոյն խնդիրը: Իսկ Հայաստանի եւ հայ ժողովուրդի դիմագրաւած այսօրուան մարտահրաւիրումներուն դիտանկիւնէն, միջազգային վերադասաւորումներուն ամէնէն հրատապ գոտիներէն մէկուն մէջ ազգովին յայտնուած ըլլալով, սեփական տեղն ու ընելիքը ճշդելու հրամայականէն աւելի բախտորոշ խնդիր չունինք ներկայիս:

Յատկապէս հայ քաղաքական միտքը ամէն պատճառ եւ հիմք ունի կիսելու մտահոգութիւնը Ընկերվար Միջազգայնականին, որ ծայր աստիճան վտանգաւոր կը նկատէ միջազգային քաղաքականութեան մէջ այսօր գերիշխող միաբեւեռ աշխարհակարգի հաստատման ուղղութիւնը: Իրաքեան տագնապով զոդապեղծուած միաբեւեռութեան ռազմապետական էութիւնը կը սպառնայ նախ ռազմաքաղաքական անհասարակը՝ ռուսութեան մատնելը ողջ երկրագունտը եւ ապա, ու այդ հիման վրայ, կայսերապետական չարաշահումներու գոյ գործելու ամբողջ աշխարհամասեր ու ժողովուրդներ: Ընդհանուր այդ վտանգը դիմագրութեանը նպատակով, իր բնականաբար անհրաժեշտ միջազգային շարժումը, Միջազգայնականի իր Սան Փաուլոյի Վեհաժողովին բնարան ընտրած էր հետեւեայ առաջադրանքը. «Վերադարձ քաղաքականութեան»՝ յանուն համաշխարհային արդար եւ պատասխանատու կառավարման, յանուն ժողովուրդի կողմէ կառավարելի համաշխարհայնացման»: Նոյնքան խոսուին են ընդհանուր այս առաջադրանքը մասնաւորող ինը գլխաւոր հարցերը. «Ի խնդիր կայուն գրագցման եւ ապահովութեան ծառայող բազմաբեւեռութեան»: «ՄԱԿի դերն ու բարեկարգումը»: «Միջազգային ելեւմտական (ֆինանսական) համակարգը՝ նոր Պրեթրն Վտուսի անհրաժեշտութիւնը»: «Միջազգային առեւտուրը՝ արդարամտութիւն, աշխատանքի ապահովում եւ միջավայր»: «Աշխարհամասային համարկում. նոր ճարտարապետութիւնը»: «Աշխարհաբանութեան համար՝ բախումներու կանխում եւ լուծում»: «Թշուառութիւն եւ համաճարակ. անթոյլատրելի վէրքերը»: «Քաղաքները ներառուումը. սեռային հաւասարութիւնը եւ կինները քաղաքականութեան մէջ»: «Ուժեղացնել ժողովուրդը ամբապնդել ժողովրդավարական հաստատութիւնները եւ քաղաքացիական հասարակութիւնը»:

Այս ուղղութիւններով իր առաջադրած արդար եւ հաւասարակշռուած աշխարհի հաստատման իմաստով է, ահա, որ Ընկերվար Միջազգայնականի մեծ ընտանիքէն ներս Դաշնակցութեան լիիրաւ անդամի կարգաւիճակին մամրողական նօրէն վերականգնումը յատկանշուեցաւ գաղափարական եւ ռազմավարական սեփական հունը վերագտնելու խորհուրդով: Աշխարհի չորս ծագերուն տարածուած ընկերվարական-ժողովրդավարական կուսակցութիւններուն հետ միասնարար, Դաշնակցութիւնը հետամուտ է արդարութեան եւ իրաւունքներու հաւասարակշռութեան վրայ խորստուած աշխարհի մը կերտումին՝ յանուն Հայաստանի ու հայ ժողովուրդի կեցութեան ընդհանուր բարեշրջման:

Անշուշտ պատմական սխալ մը սրբագրելու առումով եւս նշանակալից էր Ընկերվար Միջազգայնականի 22րդ Վեհաժողովը, որուն Դաշնակցութիւնը մասնակցեցաւ բարձրաստիճան պատկերակուցեամբ՝ Հ.Յ.Դ. Բիւրոյի ներկայացուցիչ ընկերվար զլխաւորութեամբ: 19րդ դարավերջին Ընկերվար Միջազգայնականի ստեղծման առաջին իսկ տարիներէն Եւրոպայի ընկերվարական կուսակցութիւններուն հետ աշխոյժ գործակցութիւն հաստատած եւ 1908ին Միջազգայնականի լիիրաւ անդամի կարգաւիճակին արժանացած Դաշնակցու-

թիւնը փաստօրէն իրաւազրկուեցաւ 20րդ դարու երկրորդ կիսուն, երբ Պաղ Պատերազմի շրջանին Միջազգայնականը վերատեսուցեց եւ լաւագոյն պարագային դիտորդի կարգաւիճակ շնորհեց անկախ պետականութենէն զրկուած ազգերու ընկերվարական կուսակցութիւններուն եւ, այդ շարքին, Դաշնակցութեան:

Բողոքելով այդ իրաւազրկումին դէմ, 1960ականներուն, Դաշնակցութիւնը լիիրաւ անդամի իր կարգաւիճակին վերահաստատումով պայմանաւորեց Միջազգայնականին իր անդամակցութիւնը: Մեծապետական նախապատուութեանց ժամանակներ էին եւ ընդառուցում չգտաւ Դաշնակցութեան բողոքը: Հ.Յ.Դ. ստեղծուց իր անդամակցութիւնը՝ միաժամանակ շարունակելով իր շփումներն ու դիտումները յանուն պատմական սխալի սրբազանութեան: Միջազգայնականէն ներս Դաշնակցութեան լիիրաւ անդամի կարգաւիճակը վերականգնելու ուղղութեամբ աշխատանքները թափ առին յատկապէս 1982էն ետք, երբ ատենի ընկերվարական արժանաւոր գործիչներու՝ Գերմանիոյ, Աւստրիոյ եւ Շուէտի վարչապետներ Ուլիլի Պրանտի, Պրուսո Գրայսթրի եւ Օլաֆ Փայմէի, ինչպէս նաեւ Ֆրանսոյի նախագահ Ֆրանսուա Միթրանի հեղինակութեամբ դեկտեմբերներու կողմէ զօրակցութիւն ցուցաբերուեցաւ Դաշնակցութեան լիիրաւ վերանդամակցութեան: Հարկ եղաւ կտրել երկար ճանապարհ, շուրջ քսան տարի, մինչեւ որ աստիճանաբար սրբագրուէր սխալը եւ քաջ առ քաջ հաստատագրուէր Հ.Յ.Դ. անդամակցութեան նախ հիւր դիտորդի, ապա դիտորդի, յետոյ խորհրդակցական անդամի եւ ի վերջոյ լիիրաւ անդամի կարգաւիճակը: Թէեւ աւելի քան տարի մը առաջ Ընկերվար Միջազգայնականի խորհուրդը իր հաւանութիւնը տուած էր Հ.Յ.Դ. լիիրաւ անդամակցութեան, բայց Միջազգայնականի 22րդ Վեհաժողովին վերապահուած էր պաշտօնական եւ վերջնական որոշումին կայացումը: Այսպիսով՝ Սան Փաուլոյի մէջ, Միջազգայնական կատարեց պատմական սխալին սրբագրութիւնը եւ Դաշնակցութիւնը հանդիսացաւ նախկին խորհրդային Միութենէն առաջացած անկախ հանրապետութեանց մէջ գործող միակ կուսակցութիւնը, որ լիիրաւ անդամի կարգաւիճակով իր երկիրն ու ժողովուրդը՝ Հայաստանի ու հայութեան ձայնն ու իրաւունքները կը ներկայացնէ Միջազգայնականին մէջ:

Անսպասելի էջը, հետեւաբար, որ Ազգայնականի կողմէ արագօրէն լսելի դարձան բողոքի հակադարձութիւններ Միջազգայնականի Սան Փաուլոյի Վեհաժողովի որոշումին դէմ: Ընկերվար Միջազգայնականի վայելած վկայն ու միջազգային ազդեցութիւնը նկատի ունենալով՝ ազգայնականները բնականաբար մտահոգ են, որ Դաշնակցութեան լիիրաւ անդամի կարգաւիճակին հաստատագրումը ոչ միայն լուրջ խոչընդոտ պիտի հանդիսանայ Արցախեան Հարցի շուրջ հակահայ քարոզչութիւն ծաւալելու Պաքուի փորձերուն, այլեւ՝ պիտի խանգարէ ընդհանրապէս Հայաստանի ու հայութեան իրաւատիրական ձայնը միջազգային տեսանկյունով մէջ խեղդելու համակարգուած այն գործունէութիւնը, որուն լծուած է Պաքու՝ Անգարայի օրհնութեամբ: Արհասարհելի է են թուրքեւազգայնականական հակահայ քարոզչութիւնը եւ ինչպէս ՄԱԿի ու Եւրոմիութեան շրջանակներէն ներս, այնպէս ալ միջազգային կշիռ ներկայացնող բոլոր ատեսներու, յատկապէս Ընկերվար Միջազգայնականի տարբերութեամբ միջազգային մեծ համախումբում մը մօտ հարկ է հետեւողական աշխատանքով միշտ պատրաստ ու արթուն անակալները:

Ընկերվար Միջազգայնականի մէջ լիիրաւ անդամի իր կարգաւիճակը ամբողջականօրէն վերականգնելով՝ Դաշնակցութիւնը կոչուած է յառաջապահի դիրքերէն փարելու իր ուսերուն ծանրացող առաքելութեան. ոչ միայն արթուն պահակը մնալու Հայաստանի ու հայ ժողովուրդի անբռնարար իրաւունքներուն եւ արդարութեան պահանջին, այլեւ՝ իր գործուն մասնակցութիւնը բերելու նոյնինքն ազգային մեր շահերուն պաշտպանութիւնը երաշխաւորող արդար եւ պատասխանատու աշխարհակարգ մը կերտելու ընդհանուր շարժումին:

«ԳՐԾԱԿ»

ՏԱՐԵՍԿԻՉԲԻ ՅԱՒԵԼԵԱԼ ՏԵՂԵԿԱՏՈՒՌԻՏԻՆ «ԽԱՉԵՐ ԳԱԼՈՒՍՏԵԱՆ» ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

«Խաչեր Գալուստեան» մանկավարժական կազմաւորումի կեդրոնի գործունէութիւնը շարունակուած ըլլալով 2003ի արձակուրդային շաբաթներուն ընթացքին՝ ներկայ տեղեկատուութեամբ լրացուցիչ զեկուցում կը տրուի կատարուած աշխատանքներուն մասին:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՆ

Յիշուած էր 2002 - 2003 տարուան տեղեկագիրին մէջ, թէ կեդրոնի վարիչը մանկավարժական առաքելութեամբ պիտի գործէր Պոլսոյ եւ Մարսէյի մէջ: Այս աշխատանքը տեղի ունեցաւ Օգոստոս եւ Սեպտեմբեր ամիսներուն եւ տուաւ լաւ արդեւանքներ: Առաջին նախաձեռնութեան մասնակցեցան մեծ թիւով ուսուցիչ-ուսուցչուհիներ: Գնալը կզդի կեցութեան շաբաթներուն ընթացքին վարիչը անպաշտօն հանդիպումներ ունեցաւ անոնց հետ եւ զրուցեց ընդհանուր մանկավարժութեան, հայերէնի բարելաւումի, հայերէնի դասաւանդումի կերպի եւ հայկական մշակոյթի մասին:

Պոլսահայ մանկավարժները ցուցաբերեցին բացառիկ լրջութիւն եւ բարեխաղելու մարմաջ մը, որ յուզիչ էր ուղղակի: Անոնք գոհ մնացին այս հանդիպումներէն եւ զանոնք նկատեցին մարդկային ծառայութիւն մը, որ օգտակար է նաեւ իրենց բնակավայրի կրթական դրութեան:

Այս գործընթացն մասին խօսուեցաւ պատրիարքին եւ Ուսուցչաց հիմնարկի դիւանի անդամներուն: Կապ պահուեցաւ նաեւ տիկ. Լուսին Մալիքեանի եւ օր. Յասմիկ Շահինեանի հետ, որպէսզի անոնք իրենց խորհուրդներով օգտակար ըլլան պոլսահայ մանկավարժներուն:

Պոլսական հանդիպումներուն մասին յօդուած մը տպուեցաւ Փարիզի «Յառաջ» օրաթերթին մէջ:

Երկրորդ այցելութիւնը տեղի պիտի ունենայ Սեպտեմբերի առաջին երկու շաբաթներուն, բայց սեղմուեցաւ միայն երկրորդ շաբաթուն մէջ՝ տիկին Շաղիկ Սկրտիչեանի փախաբքով: Ան մասնակցի էր այս առաքելութեան եւ սերտօրէն գործակցեցաւ վարիչին հետ: Աշխատանքը կատարուեցաւ դպրոցի նորակառոյց շէնքին մէջ: Առտուրնէ մինչեւ երեկոյ տեղի կ'ունենային դասալուսումներ ու կը տրուէին նմուշ-դասեր, երեկոյեան կը կատարուէին տեսական աշխատանքներ եւ կարծիքի փոխանակութիւն:

Այս աշխատանքին մասին զեկուցուեցաւ պատասխանատուներուն: Համազգայինի Մարսէյի վարչութեան յատուկ մէկ ժողովին բանաւոր տեղեկատուութիւն կատարուեցաւ եւ եզրակացութիւններ հանուեցան: Անոնք կը վերաբերէին ո՛չ միայն ներկայ աշխատեալներին, այլ նաեւ՝ ապագայի գործունէութեան: Թեյադրուեցաւ հայերէնի ուսուցիչներ տեղույն վրայ պատրաստելու մասնակցութիւնը ու մանկավարժի մէջ հայերէնը աւելի կենդանի կերպով խօսակցական լեզու դարձնել:

Այս առաքելութեան մասին եւս գրուեցաւ «Յառաջ»-ի մէջ:

ԸՆԳՆԱՐԱՅՈՒՄ

Հիմնադրամի յանձնախումբի վերջին ժողովին թեւադրութեամբ, խտացած դասաւանդումի այս ձեւը աւելի ընդհանրական կիրառուած պիտի ունենայ ներ-

ՅԱՂԹԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ

Ընկերվար Միջազգայնականի Սան Փաուլոյի 22րդ համագումարը վերահաստատեց Հայ Յեղափոխական Դաշնակցութեան լիիրաւ անդամի կարգաւիճակը, որ դադարած էր 1960ին, վերակազմուած Ընկերվար Միջազգայնականի կազմակերպական կանոններու վերատեսուցեցան պատճառով: Լիիրաւ կարգաւիճակի վերահաստատումը չորս տասնամեակի ուշացումով կուգայ՝ անցնելէ ետք դիտորդի եւ խորհրդակցական անդամի հանգրուանները:

Արդար վերահաստատում՝ կուսակցութեան մը համար, որ «Հոկտեմբերեան Յեղափոխութեան» 27 տարի առաջ իսկ էաւորուած էր արգաւիյի գարթօնի սկզբունքային գաղափարաբանութեամբ եւ 1907ին ալ անդամակցած էր երկրորդ Միջազգայինին, իսկ Ընկերվար Միջազգայինի հիմնադիր անդամներէն եղած է՝ դիմագրի մատուցումը ու արժէքափերու սկզբունքային յանձնարարութիւնները: Գերբնախաղաղութեամբ արգաւիյի յանձնարարութեամբ 100 երկիրներէ 150 ընկերվար կուսակցութիւններու կարգին իր արժանի տեղը կը գրուէ, համաշխարհային խղիւղութեան, արդարութեան ու ժողովրդավարութեան իր ներուժն ու փորձառութիւնը բերելով համաշխարհային այս ազդեցիկ շարժման ճամբով:

Հ. Յ. Դաշնակցութեան այս շարժման մէջ ներկայութիւնը աւելի կ'արժեւորուի, եթէ նկատի ունենանք մանաւանդ, որ Սեկոյի Պետութիւններու Հասարակապետութեան մէջ միակ կուսակցութեան լիիրաւ անդամը, որ կ'անդամակցի անոր, եւ Հարաւային Կովկասը Արեւելք-Արեւմուտք առանցքին գօղող միակ կամուրջն է:

Հ. Յ. Դաշնակցութեան տասնամեակներու հետեւողական պայքարները եւ համակարգումի ճիգերը վստահութիւններ շնչեցին ընկերվարութեան նկատմամբ իր դաւանած արժէքներուն:

Այդ արժէքներուն յղացքի մտածողութիւնն է, որ կը յարգանակ է այսօր:

«ԱԶՍ ՕՐ»

կայ տարբերմանն սկսած: Այս նպատակով Լիրաննի եւ արտասահմանեան թեմերու կրթական մարմիններուն պիտի առաջարկուին յատուկ ծրագիրներ՝ մանկավարժի, նախակրթարանի եւ միջնակարգ-երկրորդականի ուսուցիչ-ուսուցչուհիներուն համար:

Մարտիները պատրաստ են արդէն: Անոնք տասնօրեայ դասընթացներ կ'ենթադրեն, որոնք կրնան աւանդելի երկու շաբաթէն, առօրեայ դրութեամբ՝ արտասահմանի մէջ, եւ երեք շաբաթէն՝ Լիրաննի մէջ, օրընդմէջ դասաւանդուով:

Ահաւանիկ նիւթերու ցանկը.

- Ա. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱՐ**
1. Երեխայի հոգեբանութիւն
 2. Մանկավարժութիւն
 3. Հայերէնի դասաւանդումի կերպ
 4. Աշխատանքի ծրագիր
- Բ. ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ**
1. Մանուկի հոգեբանութիւն
 2. Մանկավարժութիւն
 3. Հայերէնի դասաւանդումի կերպ
 4. Հայոց պատմութեան եւ կրօնի դասաւանդումի կերպ

Գ. ՄԻՋՆԱԿԱՐԳԻ ԵՒ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

1. Պատանիի հոգեբանութիւն
2. Մանկավարժութիւն
3. Հայերէնի եւ հայ գրականութեան դասաւանդումի կերպ
4. Հայոց պատմութեան դասաւանդումի կերպ

ԿՐԹԱԿԱՆ ԿԱՅՈՒԹԻՆ

Մեր ուսանողուհիներուն ընդհանուր թիւն է 26: Ասոնց մէջ հաշուուած են այն չորս անձերը, որոնք սկզբունքով անցած տարի պիտի ներկայանային ԵՊԻ քննութեան, բայց կրթական նախարարութեան որոշումի փոփոխութեան պատճառով մնացին այս տարուան: Անոնք դասերու պիտի չհետեւին, բայց պիտի կրնան արձանագրուել թեկնածուներու մեր ցանկին վրայ: Մեր բարոյական պատրաստութիւնն է նեցուկ կանգնել անոնց, քանի իրենց կամքն անկախաբար չկրցանք քննութեան ներկայանալ անցած տարի:


Միւս 22 հոգիները պիտի հետեւին սահմանափակ թիւով դասերու՝ ժամանակ եւ դրամ խնայելու նպատակով: Դասերը խտացուած են երկու օրերու մէջ՝ Երեքշաբթի եւ Ուրբաթ:

Այս պատճառով ներկայ տարբերման մեր ԵՊԻ թեկնածուները պիտի չկրնան հետեւիլ հայերէնի բարելաւումի եւ դասաւանդումի կերպի դասերուն: Գալ տարբերմանն՝ սկիզբը պիտի հետեւին անոնց՝ կարենալ ստանալու համար մեր կեդրոնի վկայականը:

Դասական պայմանները, որոնց մէջ կը սկսինք 2003 - 2004 տարեշրջանը, յաւատարմութիւն կը ներշնչեն:

«ԽԱՉԵՐ ԳԱԼՈՒՍՏԵԱՆ»
ԿԵԴՐՈՆԻ ՎԵՐԻՉ
Գ. ՇԱՀԻՆԵԱՆ

Անքիլիսա, 1 Նոյեմբեր 2003



ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՐՉՐԱԿՈՅՆ ՀԻՄՆԱՐԿ

(Գործակցութեամբ եւ հովանաւորութեամբ Երեւանի Պետական Համալսարանի)

Համագործակցութեամբ՝
Ազգ. Առաջնորդարանի Ուսումնական Խորհուրդին

ՀԱՅՈՑ ԼԵՁՈՒԻ ԽՏԱՅԵԱԼ ԴԱՍԸՆԹԱՅՔ

Հայերէնի բարելաման անվճար ձեռնարկ՝
պատանիներու, երիտասարդներու,
մայրերի ու դասաւանդող ուսուցիչներու
ու հայկական հաստատութիւններու
պաշտօնեաներուն համար

90 ժամեայ դասաւանդութիւն՝
4 Նոյեմբեր 2003 - 13 Յունիս 2004

Դասաւանդութեան օրեր՝ ամէն Երեքշաբթի
եւ Հինգշաբթի, երեկոյեան ժամը 5:00 - 6:30,
Մ. եւ Հ. Արսլանեան ճեմարան, Մրզիդ:

*Դասընթացի ասարդին՝
համապատասխան վկայագիր*

Մանրամասնութեան համար հեռաձայնել
04 - 712603, 04 - 712604, 03 - 429685
թիւերուն

● Փոխադրամիջոցը ապահովուած է
հետեւեայ վայրերէն.
- ժամը 4:30ին Վարդանանց եկեղեցոյ առջեւ,
- ժամը 4:45ին Սիմֆեան շէնքերուն առջեւ:

Մայրենիի կատարելագործման հրատիչ



ԸՆԿԵՐԱՅԻՆ ԻՈՂԵՐ

Լիբանանեան կեանքի երեւոյթներ

ԼԻԲԱՆԱՆ ԵՆԹԱԿԱՅ Է ԵՐԿՐԱՇԱՐԺԻ, ԲԱՅՑ ԱՆՈՐ ՇԷՆՔԵՐԸ ՊԱՏՐԱՍ ԶԵՆ ՑՆՑՈՒՄՆԵՐԸ ԴԻՄԱԳՐԱԲԵԼՈՒ



Պատերազմներ, ռմբակոծումներ, կոտորածներ, սպանութիւններ եւ բռնութիւններ կը գործադրուին աշխարհի զանազան կողմերը, անոնք ցաւ եւ տառապանք կը պատճառեն միլիոնաւոր մարդոց:

Մարդու կողմէ ալ մարդու նկատմամբ ի գործ դրուած այս արարքները մարդկային իսկական ոճիրներ են, որոնցմէ զերծ կը կարծեն մնալ մեծ պետութիւններն ու հզօր երկիրները:

Սակայն այս բոլորէն աւելի վտանգաւոր եւ անխուսափելի են բնութեան զայրոյթներն ու պոռթկումները, որոնք չեն ճանչնար մեծ կամ փոքր պետութիւններ եւ հզօր կամ ստորուկ ազգեր:

Բնութիւնը իր գեղեցկութեամբ ու բարեքնեցով, ինչպէս նաեւ իր ժխտական կողմերով եւ չարիքներով հաւասար աչքով կը նայի աշխարհի վրայ ապրող բոլոր մարդոց:

Բնութիւնը գեղեցիկ է իր արտաքին տեսքով, իր կանաչ ծառերով եւ կապոյտ ծովով, սակայն ան միեւնոյն ժամանակ սարսափելի է իր թաքուն աշխարհով, անտեսանելի, սակայն նոյնքան ազդեցիկ ստորերկրեայ զրուծեամբ:

Ժամանակի ընթացքին մարդիկ գտած են զանազան ձեւեր եւ միջոցներ ռուճերէն եւ մարդկային աղէտներէն փրկուելու կամ պաշտպանուելու համար, սակայն անոնք չեն կրցած խուսափիլ աղէտներէն:

Բնական ամէնէն մեծ եւ սարսափելի աղէտներէն մէկը կը նկատուի երկրաշարժը, որ անակնկալ կերպով կը ցնցէ աշխարհի վրայ գտնուող որեւէ երկիր եւ իր գիրկը կ'առնէ քաղաքներ, գիւղեր եւ անոնց բնակիչները: Այս առնչութեամբ նախազգուշութիւններ առնուած են մասնաւորապէս երկիրներուն մէջ, ուր յաճախ երկրաշարժեր կը պատահին. սակայն, հակառակ այս իրողութեան, երկրաշարժէն ամբողջովին խուսափիլը անկարելի է, որովհետեւ զօրաւոր ցնցումի պարագային, եթէ նոյնիսկ տունները համապատասխան չափանիշներով կառուցուած եւ փայտեայ են, անոնք իրենց կառոյցով կրնան մտնել գետնին տակ:

ԻՆՉՈՒ ԵՐԿՐԱՇԱՐԺԵՐ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱՆ

Ստորերկրեայ խաւերուն միջեւ գտնուող ճեղքերուն մօտ շարժումներ տեղի կ'ունենան եւ անոնք կը յառաջանեն ցնցումներ կամ երկրաշարժեր: Այս մէկը շարժումը մըն է հողին ներքին կեղեւին մէջ, որ կրնայ սկսիլ 5 քիլոմետր խորութեամբ եւ կը շարժէ հողին մակերեսը: Խորունկ վայրերուն մէջ տեղի ունեցող ուժգնութեան համաձայն, երկիրը կը շարժի եւ կ'ենթարկուի փոքր ցնցումներու կամ մեծ երկրաշարժերու:


Երկրաշարժը թէեւ շատ կարճ կը տեւէ, սակայն ան, յատկապէս եթէ ուժեղ ըլլայ, շատ մեծ կորուստներ կը պատճառէ եւ հազարաւորներ կը սպաննէ:

